Կարգապահական գործ թիվ ԿԳ-21022

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի մարտի 22-ի թիվ 12-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/05-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՔՅԱՐՈՒՆՑԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Մանե Կարապետյանի, Խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Գայանե Դեմիրչյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեժլումյանի, Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Անուշավանի Քյարունցի (արտոնագիր՝ թիվ 1260) նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>**

Հանրային պաշտպանի գրասենյակի **(այսուհետ՝ նաև ՀՊԳ)** ղեկավար Մելանյա Առուստամյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) ՀՀ փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)** ներկայացրած միջնորդությամբ հայտնել է, որ 2021թ. օգոստոսի 24-ին ՀՊԳ է ստացվել փաստաբան Գեորգի Մելիքյանի գրությունը, համաձայն որի հանրային պաշտպան Արթուր Քյարունցը չի բողոքարկել իր պաշտպանյալ Արթուր Դավթյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 21.07.2021թ. թիվ ՍԴ/0013/06/21 որոշումը: Այդ մասին Գեորգի Մելիքյանը տեղեկացել է, երբ 2021թ. հուլիսի 27-ին ստանձնել է Արթուր Դավթյանի պաշտպանությունը և վերաքննիչ բողոք ներկայացրել վերը նշված դատական ակտի դեմ: Մասնավորապես,

վերաքննիչ դատարանում տեղեկացել է, որ Արթուր Քյարունցը չի բողոքարկել թիվ ՍԴ/0013/06/21 որոշումը, իսկ իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը դատարանի 09.08.2021թ. որոշմամբ թողնվել է առանց քննության՝ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքով: Գեորգի Մելիքյանը որոշել է բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությամբ դիմել առաջին ատյանի դատարանին, միևնույն ժամանակ ինչպես գրությամբ, այնպես էլ հեռախոսազանգերի միջոցով փորձել է Ա. Քյարունցից պարզել բողոք չներկայացնելու պատճառները, սակայն՝ անարդյունք:

Համաձայն միջնորդության՝ Գեորգի Մելիքյանի գրության հիման վրա ՀՊԳ-ում նախաձեռնվել է ուսումնասիրություն, հանրային պաշտպան Արթուր Քյարունցից պահանջվել է բացատրություն:

Ա.Քյարունցը որպես բողոք չներկայացնելու և Գեորգի Մելիքյանի հարցումներին չարձագանքելու հիմնավորում է ներկայացրել այլ գործերով ծանրաբեռնվածությունը, մինչդեռ կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ զեկուցագրում նշված քրեական գործերից վերջինս որպես հանրային պաշտպան մասնակցում է միայն մեկ (Արթուր Հարությունի Դավթյանի վերաբերյալ) գործով: Նշված ժամանակահատվածում իր ծանրաբեռնվածությունն արտացոլող մնացյալ բոլոր քրեական գործերով Արթուր Քյարունցը մասնակցում է պայմանագրային հիմունքներով:

Ներկայացված փաստական տվյալները համադրելով վերաբերելի իրավական ակտերի կարգավորումներին՝ Դիմողը եկել է եզրահանգման, որ Արթուր Քյարունցը, նախապատվություն տալով իր պայմանագրային հիմունքներով ստանձնած պարտավորություններին, անտեսել է հանրային պաշտպանի իր պարտականությունները՝ դրանով իսկ զրկելով անվճար իրավաբանական օգնություն ստացող վստահորդին որակյալ պաշտպանությունից:

Հավելել է, որ դրսևորված խախտման բնույթը հատկապես էական է այն իմաստով, որ պարտականության չկատարումը կապված է անձի այնպիսի հիմնարար իրավունքի հետ, ինչպիսին ազատությունն է:

Ըստ Դիմողի՝ Արթուր Քյարունցը խախտել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6 կետի, 3.1.8, 3.5.5 ենթակետերի, «Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի» 46-րդ, 55-րդ կետերի պահանջները:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.09.21թ . թիվ 229-Ա/ԿԳ-21022 որոշման հիման վրա փաստաբան Արթուր Անուշավանի Քյարունցի (արտոնագիր՝ թիվ 1260) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի

2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-21022): 30.09.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Կարեն Քամալյանին (այսուհետ նաև՝ Նախապատրաստող):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը չի ներկայացրել բացատրություն:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի նախապատրասման ընթացքում սահմանված կարգով գործը նախապատրաստողի գրության հիման վրա փաստաբանը չի ներկայացել որևէ բացատրություն:

Նախքան սույն կարգապահական գործի հարուցումը փաստաբանը ներկայացրել է բացատրություն՝ ուղված ՀՊԳ ղեկավարին, որով ըստ էության ընդունել է իր կողմից վերաքննիչ բողոք չներկայացնելու և սահմանված ժամկետը բաց թողնելու հանգամանքը, իր կողմից դրսևորած արարքը պատճառաբանել է այլ գործերով ծանրաբեռնվածության հիմքով:

Պալատի խորհրդի նիստին փաստաբանը չի ներկայացել՝ թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 29.11.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 03.12.2021թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 22.03.2022թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. **<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

Փաստաբան Ա.Քյարունցը, հանդիսանալով թիվ ՍԴ/0094/01/21 գործով մեղադրյալ Արթուր Հարությունի Դավթյանի հանրային պաշտպանը, նույն գործով չի ներկայացրել իր պաշտպանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը բողոքարկելու վերաբերյալ վերաքննիչ բողոք՝ բաց թողնելով օրենքով սահմանված վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատավարական ժամկետը*:*

Սույն փաստը հաստատում է փաստաբան Գեորգի Մելիքյանին կողմից ՀՊԳ Ղեկավարին ուղարկված 24.08.2021թ-ին ուղված դիմումով, ինչպես նաև Ա.Քյարունցի կողմից Գեորգի Մելիքյանին ուղարկված բացատրությամբ:

Հանրային պաշտպան Արթուր Քյարունցն ընդունել է իր կողմից վերաքննիչ բողոք չներկայացնելու և դատավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

Սույն փաստը հաստատվում է 24.08.2021թ.-ին Արթուր Քյարունցի կողմից ՀՊԳ ղեկավար՝ Մ.Առուստամյանին և Գ.Մելիքյանին ուղարկված բացատրությամբ:

6. **<u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված 21.03.22թ. տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Քյարունցը (արտոնագիր թիվ՝ 1260) փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 15.10.2011թ., և 2019-2022թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է մեկ անգամ (չհաշված սույն կարգապահական գործը), որը կարճվել է:

7. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Խորհուրդը, ուսումնասիրելով Դիմողի և փաստաբանի բացատրությունները և հետազոտելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Արթուր Քյարունցը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ պահպանելով Օրենքի, կանոնադրության և Կանոնագրքի նկատմամբ պահանջները՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Վերլուծելով նշված կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ:

Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն դեպքում Խորհրդի համար պարզման է ենթակա հետևյալ իրավական հարցադրումը՝ արդյո՞ք փաստաբան Ա. Քյարունցը վստահորդին բարեխղճորեն և ժամանակին է ցուցաբերել իրավաբանական օգնություն, մասնավորապես՝ արդյո՞ք դատավարական ժամկետի պահպանմամբ կազմվել է վերաքննիչ բողոք:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում պարզվել է, որ Հանրային պաշտպան Ա.Քյարունցը աշխատել է ոչ լրիվ աշխատաժամանակով, և վերջինիս վարույթում է գտնվել միայն սույն կարգապահական գործի շրջանակներում հիշատակված Ա.Դավթյանի քրեական գործը, իսկ մնացաց այլ գործերը եղել են փաստաբանի անձնական գործերը: Սույն փաստերը հաստատվել են ՀՊԳ ղեկավարի կողմից արված ոսումնասիրությունների արդյունքում, ինչպես նաև ՀՊԳ ղեկավարի կողմից հանրային պաշտպան Ա.Քյարունցին պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ, որոնց դեմ փաստացի որևէ առարկություն չի ներկայացրել Ա.Քյարունցը, ավելին՝ վերջինս նախքան կարգապահական գործի հարուցումը բացատրություն է ներկայացրել ՀՊԳ ղեկավարին, որով ընդունել է իր կողմից վերաքննիչ բողոք չներկայացնելու և դատավարական ժամկետ բաց թողելու հանգամանքը:

Ամբողջ վերը նշվածը հիմք ընդունելով, միանշանակ է, որ փաստաբանը, Ստանձնելով Ա.Դավթյանի շահերի պաշտպանությունը, խախտել է փաստաբանի համար սահմանված բարեխղճութայն կանոնը, այն է՝ պատշաճ կարգով ցույց չի տվել իրավաբանական օգնություն, ժամանակին չի կատարել նյութերի ոսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար չի իրականացրել գործով անհարաժեշտ գործողությունները, մասնավորապես՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել վերաքննիչ բողոք, արդյունքում վերջինիս զրկել է օրենքով սահմանված վերաքննիչ բողոք ներկայացնելու և արդունավետ պաշտպանվություն ունենալու իրավունքից, միաժամանակ խախտելով նաև Հանրային պաշտպանների համար սահմանված աշխատանքային կանոնակարգերը:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ: Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Ա.Քյարունցի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի պահանջներով,

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արթուր Անուշավանի Քյարունցին (արտոնագիր թիվ 1260) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արթուր Անուշավանի Քյարունցի (արտոնագիր թիվ 1260) նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մանե Կարապետյան

22 մարտի 2022թ.
թիվ ԿԳ/05-Ա
ք. Երևան